

**ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ  
ԳՐԱՐԱՐԱՇԵՐՏ ԲԱՌԵՐՈՒՄ**

**Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Ինչպես հնչյունական, բառապաշարային, բառակազմական-իմաստաբանական, այնպես էլ ձևաբանական փոփոխությունները, որքան էլ համեմատաբար դանդաղ ընթացք ունենան, լեզվի բնականոն զարգացման յուրահատկությունների սովորական դրսևորումներից են:

Միջին հայերենի գրաբարաշերտ բառերում տեղ գտած ձևաբանական փոփոխությունները վերաբերում են քերականական տարբեր կարգերի (խոսքի մաս, հոլով, հոլովում, թիվ, սեռ ևն) և բնութագրվում այլևայլ առանձնահատկություններով: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

**1. Խոսքիմասային փոփոխություններ**

Հայտնի է, որ խոսքիմասային միավորները, իրենց բուն կիրառություններից բացի, հաճախ գործածվում են նաև այլ խոսքիմասային նշանակությամբ, որը երբեմն հանգեցնում է խոսքիմասային յիարժեք փոխանցումների: Նման կիրառություններով ու փոխանցումներով առանձնանում են հատկապես ածականներն ու գոյական անունները: Նույն պատկերն ենք նրկատում նաև միջին հայերենում, որի գրաբարաշերտում ևս խոսքիմասային փոփոխությունների ենթարկվել են գերազանցապես նշված խոսքի մասերը, սակավ դեպքերում էլ՝ մյուսները: Քննարկվող փոփոխությունների էությունն այն է, որ այս կամ այն խոսքի մասը ստանում է այնպիսի կիրառություն կամ ձևեր բերում այնպիսի իմաստ կամ իմաստներ, որոնք անծանոթ են գրաբարին, Ըստ որում նման փոփոխությունները վերաբերում են թե՛ տարարժեք, թե՛ ոչ տարարժեք խոսքի մասերին, ինչպես նաև նրանց թեթևածեղներին: Ահա՝

ա) Գոյական անվան ածականական, մակբայական և կապային կիրառություններ:

Արար, գ., միջ. հյ. արապ, ա. արաբական, արաբերեն՝ Որ անուանեն գինքն ի յարապ լեզուն շահտիեհ (Գր. 31):

Բոյժ, գ., միջ. հյ. բուժ, ա. բուժիչ՝ Ինձ օր մահու յինի եւ գուժ, հոտն վարդին է սրտիս բուժ (ԳԱ, 133):

Գազան, գ., միջ. հյ. գազան, ա. 1. ուժեղ, քարկ, թունդ՝ Դու ա՛ռ քացախ, որ չլինի խիստ գազան, ու խառնէ ի ներս աղվեսու արոյն (ԲԶ, 131):

2. փխբ. հրացայտ՝ Ճերմակ ձի՛ գաւկեղ ու գեր, աչեր՝ գազան, փայլուն ուներ (ՀՄԷ, 173):

Գանգատ, գ., միջ. հյ. գանգատ, ա. գանգատավոր՝ Գանգատ ու զրկած մարդիկ անճարակ են առ ձեզ եկել (ՀԵ, 147):

Գնացի, գ., միջ. հյ. ա. հոսող՝ Կանգնեցո՛յ ղինքն ի գնացք ջուր, որ դար ի վայր լինի (ԲԶ, 113):

Եղեմ, գ., միջ. հյ. եղեմ, ա. եղեմին՝ դրախտին հատուկ՝ վերաբերով՝  
Զինչ յեղեմ դրախտի՝ ի բո ծոցդ կան (2Թ, 155):

Կերոթած, գ., միջ. հյ. կերոթած, ա. 1. ոտիչ, կերիչ, մաշիչ՝ Թէ օծես  
խոցերուն եւ ուռէցնբրուն՝ հալէ. եւ զկերուած խոցն յիստկէ (ԱԱԱԱ, 54):  
2. Կերված, փտած, ֆայֆայված՝ Եւ թէ կերուած ակոսյին կաթեցնեն՝ ամ-  
բացնէ (ԱԱԱԱ, 131):

Ձուլածոյ, գ., միջ. հյ. ձուլածոն, ա. ձուլածո, ձուլված՝ Ի լուսնէ, եւ յաս-  
տեղաց, եւ ի ձուլածու կոոց (ՄԱԺ, 30):

Մթան (մութն բառի եզ. սո.-տր), գ., միջ. հյ. մթան, 1. ա. մութ, խա-  
վար՝ Լոյս ծագեաց մթան գիշերին (2Ե, 156): 2. մ. մութ ժամանակ, մթանը՝  
Ակամբ զոսկի գօտին, մթանն լոյս տան (ՊՅՄ, 137): 3. մ. Մթնով գիշերով՝  
Եւ ես ակնահայեաց լինիմ յայն ժամուն, որոյ գաս թէ մթան, թէ առաւօտուն  
(Պատմ., 145):

Միակողմն, գ., միջ. հյ. միակողմ, ա. մի կողմ ունեցող՝ Իսկ պարիսպ  
քաղաքին ունի պուրճ (ԳՃ. եւ) Խ. եւ մեծութիւն նորա շուրջ զպարսպան  
միակողմ (ՄԼԳԳ, 5):

Վազ, գ., միջ. հյ. վազ, մ. վազելով, շտապ՝ Ի պաշտամունս երթալ  
խիստ վազ եւ կուծն լցեց գինով (ՎԱԱ, 207):

Դիր, գ., միջ. հյ. դիր, մ. անգամ՝ Զձեր հալան ժ դիր ձեռեցէք եւ ապա  
կտրեցէք (ԽՆ, 59):

Ձեռաց (ձեռն բառի հոգն. սեռ.-տր.), գ., միջ. հյ. ձեռաց, մ. իսկուայն,  
անմիջապես՝ Թէ մարդ վայդ օծս սպանանէ, նայ ձեռաց մորթն շրջի մինչեւ  
ի յանթքն (Գր. 48):

Դէմ, գ., միջ. հյ. դէմ, 1. կ. մեկի՝ մի բանի առջև՝ դիմաց՝ Դէմ յաս-  
տուծոյ շատ մի լացին, գանգատ ասցին ի խոր սրտէ (ՅՐԳ, 426): 2. կ. մոտ,  
մոտեբեր (ժամանակի մասին)՝ Դէմ առաւօտու լուսուն ես ի ձեր երդիքն  
եկել (ՆՔ, 131):

Դիմաց (դէմ բառի հոգն. սեռ.-տր.), գ., միջ. հյ. դիմաց, կ. մի բունի  
դիմաց՝ առջև, դեմ՝ Տեսնու մարդն դիմաց աշիցն մժեխ (Գր. 84):

Զանց, գ., միջ. հյ. զանց, կ. առանց՝ Մարմինս անհոգի զանց քեզ, հո-  
գիս անդադար հետ քեզ (ԿԵ, 160):

Դուրս (դուռն բառի հոգն. հյց.), գ., միջ. հյ. դուրս, դուս, կ. դուրս՝  
Եթէ քաղքի մէջ եւ եթէ քաղքէն դուս (Կամ. արձ., 116):

բ) Ածական անվան մակրայական և գոյականական կիրառություններ:

Անաչար, ա., միջ. հյ. անաչար, մ. անխտիր, անխնա՝ Ի սոյն ամի պախ-  
րէք խիստ անաչար շարդեցան յամենայն աշխարհ (ՄԺ, Ա, 173):

Անհուլէր, ա. միջ. հյ. անհուլէր, մ. առանց հրավերի՝ Եւ թէ անհա-  
ւերք ի ծառութիւն կենայ (Անս., 31):

Անհոգ, ա., միջ. հյ. անհոգ, մ. անհոգ, ապահով՝ Եւ ելեալ ածքն տա-  
րածեցան անհոգ ի լերինս (ՎԱԱ, 41):

Անհարակ, ա., միջ. հյ. անհարակ, մ. անկասկած, անշուշտ, անպայ-  
մանորեն, անհրաժեշտաբար՝ Յորժամ ի մարդուն ի յանձն արիւնն յաւելնայ  
եւ ճանապարհ չգտնու ելանելոյ՝ եւ անճարակ փոխվի գունն (ԱԱԱԱ, 86):

Անմասն, ա., միջ. հյ. անմաս, մ. անմասն, ազատ՝ Այլ պինդ մսերն ան-  
մասն մնան ի յայն տաք բուխարէն (Գր. 109):

Անմաւելի, ա., միջ. հյ. անմաւել, մ. առանց փաւելու, անեւելի՝ Ան-  
քաւել մեղանչես, վասն այն կորնչիս (ՄՆ, 135):

Ապահով, յապահով, ա., միջ. հյ. ապով, յապով, մ. մեկի վրա հույս  
դնելով, մի բանի հետ հույս կապելով՝ Ի՛նչ կու խօսիք հետ մեզ քենով, ա-

ւետիս, գէմ շենք ի ձեր գաթան յապով (ՀՄԺԾ, 327): Քանի՞ կենամ քեզ ապով (ՆՔ, 150):

Բնիկ, ա., միջ. հյ. բնիկ, մ. իսպառ, բնավ, ամենևին, բոլորովին՝ ի մեր-ձաւորութենէ պատրաստեցո բնիկ, մինչեւ իւր առաջին բնութիւն դառնայ (ՄՀՁՄ, 150):

Անկատար, ա., միջ. հյ. անկատար, գ. (քեր.) անցյալ անկատար (բայի ժամանակաձևի անուն)՝ Ստորագասական բայքն ունի՞ զհինգ ժամանակ. ներկայն, հիբար կու սիրեմ... զանկատարն, հիզան յորժամ կու սիրէիր, կու սիրէր (ՅՔՅՔ, 177):

Առնելի, ա., միջ. հյ. այնելի, գ. կատարելի գործ, անելի՞ Չբառնայ զխալատ այնելիքն ի բժշկէն կամ ի հիւանդէն (ՄՀՁՄ, 95):

Բորբոք, ա., միջ. հյ. բորբոք, գ. (բժշկ.) բորբոքում, այբուցի՞ Ունենայ շերմն եւ ծանրութիւն, բորբոք եւ այրեաց ի լերդէն եւ շոր հազ (Գր., 148):

Գանձակ, ա., միջ. հյ. գանձակ, գանձակ, գ. (բժշկ.) միզման խանգարում, միզուրգելություն՝ Օգտէ լերդին ցաւուն եւ գանձակին ցաւուն (ԱԱԱԱ, 280): Իր ձէթն օգտէ գանձակուն ցաւուն (ԱԱԱԱ, 386):

Գործելի, ա., միջ. հյ. գործելի, գ. ածուխ՝ Մաշային ծայրովն գործելի ա՛ն երկայն եւ խառնէ՛, որ միաւորի ոսկին ու սնդիկն (ՔնՄՀ):

Դեղագործ, ա., միջ. հյ. դեղագործ, գ. նկարիչ, ներկարար՝ Դմա դեղագործ անհմուտ ասէ (Ոսկիփոր., ՆՀԲ):

Կապոյտ, ա., միջ. հյ. կապոյտ, կապուտ, գ. 1. կապտոց, կապտօց՝ Եւ այլ մանտր մանտր ծեծերն՝ որ լինեն կապոյտ կամ անարզանք կամ քաշելու ուժով (ՍՍԴ, 145): 2. Կապոյտ գույնի զգեստ կամ գլխաշոր՝ Կէսք մի այլ ի յամօթուն կապուտ հագան եւ ի սուգ մտին (ԿԾ, 140): 3. փխբ. Երկին՝ Կապուտն է մեզ վկայ, որ կու սիրեմ զքեզ (ՀՔ, 224):

Համարողական, ա., միջ. հյ. հրամարողական, գ. համարելու գիտություն, թվարանություն, համարողություն՝ Կարդացեր էր շատ գրվին եւ ուսեր ի Հունդուստան զհրամարողականն (ՀԱԳ, 345):

Հայրասպան, ա., միջ. հյ. հայրսպան, գ. (բար.) մաթուզեմի՝ Ղաթիլու ապիհի, որ է հայրսպանն (ԱԱԱԱ, 284):

զ) Այլ խոսքի մասերի նոր կիրառություններ

Աւա՛ղ, ձ., միջ. հյ. աւաղ, ա. նիհար, լղար՝ Նա թէ աւաղ լինի՛ այս աղեկ կերպ ձիս նա գիրցո (ԲՁ, 66): Թէ աւաղ մարդիկ զմիսն տապկեն եւ ուտեն՝ զանձն գիրացնէ (ԱԱԱԱ, 172):

Գալ, բ., միջ. հյ. գալ. ա. եկող, գալիք, առաջիկա՝ Գալ տարոյ եօթներբեակ աւուր պատկերն է (ՀՄ, 166):

Ձատել, բ., միջ. հյ. զատել, 1. կ. բացառութեամբ, բացի՝ Մի՛ արգիւես մանաւանդ ի հիւանդութեան սկիզբն, զատել՝ թէ շատ լինի վերաբերութիւն՝ որ վատուժի հիւանդն (ՄՀՁՄ, 82): 2. մ. Միայն, բացառապես՝ Եւ հիւանդութեան սկիզբն լուծման դեղ մի՛ տաս, զատել մրգաշուր տուր եւ մանիշակի շարապ (ՄՀՁՄ, 107):

Ձիարդ, դ., միջ. հյ. գերդ, գերթ, գերտ, զէդ, զէթ, կ. ինչպես, նման, պես, իբրև՝ Այսօր իմ բանս է յորդորել՝ զերդ ի քարէ ակն որ բխէ (ԿԾ, 131): Եւ այն ձին, որ ... եւ կենայ յինք բոլորտի՛ զէդ արծվու պճղներ, նա գոված է (ԲՁ, 60): Ու շինէ զինք զէթ հաւուկիթ մի ու դիր ի գրաստունն որովայնէ՛ (ԲՁ, 115):

Բաղարջ, գ., միջ. հյ. բաղարճ, մ. շմարսված՝ Ձի չկարէ փոխել զկերակուրն, զոր մարսէ. եւ զոր եյնէ՛ հում եյնէ՛ եւ բաղարճ (Գր., 146):

Ձինչ, դ., միջ. հյ. զինչ, կ. ինչպես, նման, իբրև, պես՝ Պապանձի ճար-

տար քո լեզուդ՝ գլխակորիս գինչ գլխայլոյ: Ուսկա ի պարտուց յահուն, կու դողամ գինչ ուոն ի քամուն (ՏրԴ, 308, 342):

Խելաւմ, մ., միջ. խելօֆ, ա. գ. խելացի, հասկացող, գիտուն (մարդ)՝ Եւ խելօքէն յիմացիր (ԱԱՕՔ, 91): Խելօքին խրատ երբ տաս, բարեկամ քեզ կու գիտէ (ՆՔ, 263): Եւ շատ խելօք այլ խեցնես (ՀԲՔ, 519):

## 2. Փոփոխություններ հոլովական համակարգում

### Ա. Անվանական հոլովում

Հոլովական համակարգում տեղի ունեցած բազմատեսակ փոփոխությունները շոշափում են ինչպես միջին հայերենի բառապաշարն, ընդհանրապես, այնպես էլ նրա գրաբարյան բառաշերտը: Ինչ խոսք, վերջինում նշված փոփոխություններն իրենց ամբողջ ծավալով չեն դրսևորվել: Վկայված օրինակները հիմնականում տրված են ուղիղ ձևով: Այդուհանդերձ, եղած սակավաթիվ փաստերն էլ բավական են որոշակի պատկերացում կազմելու ընդհանրապես հոլովական համակարգում ի հայտ եկած բնորոշ առանձնահատկությունների մասին:

Հոլովական համակարգում արձանագրվող առաջին նկատելի փոփոխությունները վերաբերում են նախ հոլովման փոխանցումներին, որոնք ներկայացնում են հետևյալ պատկերը:

ա) Տարբեր հոլովումներից Ի հոլովման անցած բառեր

Հայտնի է, որ միջին հայերենի շրջանում անհամեմատ ընդլայնվում է ի հոլովման շրջանակները՝ ի հաշիվ ոչ միայն մեծաքանակ փոխառյալ, այլև նախկինում այլ հոլովումների պատկանող բազմաթիվ բնիկ հայերեն բառերի: Նման փոփոխությունների են ենթարկվել նաև ոչ քիչ թվով գրաբարաշերտ բառեր:

1) Ի հոլովման են անցել մի շարք այնպիսի անուններ, որոնք գրաբարում վերջանում էին ն-ով ու նրան նախորդող որևէ բաղաձայնով և ենթարկվում ներքին թեքման ա պարզ կամ ի-ա խառն հոլովումներին: Միջին հայերենում այդ կարգի բառերի վերջնահանգ ն-ն ընկել է, որն էլ հենց, արտասանական յուրահատկությունների տեսակետից, առավել դյուրին է դարձրել դրանց՝ ի հոլովման անցնելուն: Բնագրային վկայություններ՝

Բաղեղն, ա., միջ. հյ. բաղեղ, ի՝ Վարդենեաց նման բոլոր ես ելեր ճոճան, բաղեղի նման ոլոր, ես՝ քեզ փաթութան (ՀՄ, 81):

Գառն, ի- ա., միջ. հյ. գառ, ի՝ Աղի կերակրէ պահ կաց եւ ապա կեր. եւ ուտելիքն հավ տապակած եւ խորոված եւ գառի միս (Ալէք., 35ա):

Եղէզն, ա., միջ. հյ. եղէզ, ի՝ Եղէզի հունտ եւ լատան եւ օշինդր ԱԱ բա... ժին ի քթան ծրարես (ԱԱՕՔ, 110):

Ոսպն, ա., միջ. հյ. ոսք, ոսպ, ի՝ Կեզվին վրա լից ... ոսպի եւ մատուտեղի եւ փրփրեմի ջուր (ԱԱՕՔ, 259):

Բուրգն, ա., միջ. հյ. պուրն, ի՝ Տարի մի եւ կէս կենա երկոտասան պրոճին (ՀՄ, 156):

Արիւն, ձիւն և կոունկ բառերը, որ գրաբարում պատկանում էին ա ներքին հոլովման, միջին հայերենում ստանում են արուն, արոյն, ձուն, ձոյն, կոուկ ձեները և ենթարկվում ի, իսկ կոուկ-ը՝ ու հոլովման, ինչպես՝ Եւ ի յայն:

<sup>1</sup> Տե՛ս, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 282—245, նաև՝ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. 2, Երևան, 1975, էջ 16—17, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Հայոց լեզվի պատմության գործնական պարամոնիքների դասընթաց, Երևան, 1989, էջ 50:

արունին ցողէն շունչ տուաւ անկած մեռելին (ՀՄԷ, 257): Եւ թէ ձուն լինի՝ նա ձունին իսպիտակութիւնն աշիշն գէն առնէ (ԱԱՕԲ, 66):

Անկեալ էին բազումք ի սագուց եւ ի կոռուկուցն ի յորոգայթն (ՎԱԱ, 192):

2) Ի հոլովման են անցել, ո, ո-ա հոլովումներ յորոգ բառեր, ինչպես՝ Արծաթ, ոյ., միջ. հյ. երծաթ, ի՝ Ետու Ա Երծաթի խաշ ու այլ գրեանք (Ման. արծ., 152):

Գիրք, ոց., միջ. հյ. գիրգ, ի՝ Եւ գթութեամբ ողորմեսցի մեզ եւ մերոցն եւ օտարի, եւ ստացողի այնմ գրգի (ՀՄ, 202):

Գումէշ, ոյ., միջ. հյ. գումէշ, գումաշ, ի, ու՝ Ոմանք ասեն, թէ գումաշի թրքով ծեփած փեթակն ճանճ չի կենալ (Ալէք., 87): Երկայն հասակաւ, թիկ-նեղ, շինքն զերդ զգումիշու (ՄԱՊ, 33):

Թութ, ոյ., միջ. հյ. բութ, ի՝ Յաղագս թըթի, որ լինի ի տոշն եւ ի ձու-բըն (ԲԶ, 113):

Հեծեալ, ոյ., միջ. հյ. հեծել, ի՝ Կռուեցան ընդ Մսրայ հեծելին (ՄԺ, Ա, 80):

Հունդ, ոյ., միջ. հյ. հունտ, ի՝ Եւ զփրփրեմին հնտին ջուրն սրքնճուպի-նով համակ ի բան պահէ (ՄՀՁՄ, 24):

Մեռեալ, ոյ., միջ. հյ. մեռել, ի՝ Թէ գինով թրջեն եւ մեռելին օծեն՝ չփը-տի (ԱԱԱԱ, 366):

Ջուր, ոյ., միջ. հյ. ջոճ, ի՝ Մէկ ծարն ի բշտին վիզն կցի, որ է ջրին ճանապարհն (ԱԱՕԲ, 35):

Յորեան, ոյ., միջ. հյ. ցորեն, ցորէն, ի՝ Եւ զցորենին ձէթն օծէ (ԱԱՕԲ, 452)<sup>2</sup>:

3) Եւ ու հոլովումներ յորոգ բառեր, ինչպես՝

Եզր, ե., միջ. հյ. էզէր, ի՝ Ետու զիմ Առճաց էզին որ ի դէմս էզէրին է (ՂԱԱ, 67):

Շաբաթ, ու., միջ. հյ. շափաթ, ի՝ Շփոթին եւ ուտեն ծաղկազարթ շափ-թին (ՀՄ, 163):

Ո-Ա խառն հոլովման բառերի պես հոլովվող հարսանիք անեզական բառը, դառնալով հարսանիք, հոլովվում է ի հոլովմամբ՝ Թէ չէ օր հարսնիցն շունենայ (ՆՔ, 304):

բ) Ու հոլովման անցած բառեր

Ինչպես գիտենք, արդի հայերենի ու հոլովման պատմական զարգացումը ծագումնաբանորեն կապված է գրաբարի ո, ո-ա հոլովումների հետ և արդյունք է ոյ>ու հնչյունափոխական օրենքի: Այս իրողութիւնը լայն տարածում է ստանում արդեն իսկ միջին հայերենի շրջանից՝ տարածվելով նաև գրաբարաշերտ բառերի վրա: Ահա՝

Ապակի, ոյ-ա., միջ. հյ. ապիկի, ու՝ Որ նման խամ ապիկու յաժան ձը-գեն անգին ջօհար (ԿԵ, 201): Հանդիպում է նաև ո հոլովմամբ՝ Զի նմանու-թին ունի սպիտակ ապիկոյ (Աբուս., 181):

Գայլենի, ոյ-ա., միջ. հյ. գալենի, ու՝ Նա գառին ուր կայ հանգիստ մէջ գալենուն ինք կենալով (ԿԵ, 173):

<sup>2</sup> Ըստ ՆՀԲ-ի (հ. 2, էջ 916), ԱԲ-ի (էջ 800), այս բառը հոլովվում է արտաքին թեքման ո պարզ հոլովմամբ: Հր. Աճառյանի «Արմատական բառարանում» (հ. 4, էջ 461), Գ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» (Երևան, 1989, էջ 281), ինչպես նաև Ն. Մկրտչյանի «Գրաբարի հոլովական գուգաձևությունները» (դիսերտացիա, Երևան, 1994, էջ 250) աշխատություններում նշվում է, որ քննարկվող բառն ունի հոլովական գուգաձևություն. հոլովվում է ո և ի-ա հոլովովներով: Ըստ որում, ի-ա խառն հոլովման համար վկայված է ընդամենը մեկ օրինակ՝ եզակի գործիականով:

Իջանել, ոյ., միջ. հյ. իջնել, ու՝ Օգտէ աշից ցաւին, և ոք ջուր իջնելու է, և որոյ աշքն յիրար կաշելուն (ԱԱԱԱ, 61):

Նախանձ բառը գրաբարում հոլովում էր ու հոլովմամբ: Միջին հայերենում այն դառնում է նախանց և ենթարկվում ոյ հոլովման՝ հանդես գալով որպես ոյ > ու հնչյունափոխութեան հակառակ իրողութուն՝ Ջտէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին, վասն նախանցոյ (Մժ, Ա, 119):

զ) Հոլովական զուգաձևութուններ ունեցող բառերի հոլովման փոխանցումներ

Միջին հայերենի գրաբարյան բառաշերտում կան այնպիսի բառեր, որոնք գրաբարի եզակի և հոգնակի թվի թեք հոլովումներում կամ միայն դրանցից մեկում ունենին հոլովական զուգաձևութուններ: Սովորաբար գրաբարյան հոլովական զուգաձևութուններից միջին հայերենը պահպանել է միայն մի տարբերակը, առանձին դեպքերում՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը: Ինչպես և պետք էր սպասել, զուգաձևութուններում ի հոլովման առկայութեան դեպքում միջին հայերենը պահպանել է հենց այդ հոլովումը: Օրինակներ՝

Ականջ, ի, իւ կամ ով., միջ. հյ. ականն, ի՝ հլութիւն և ծանրութիւն ակնճին, որ ի տաքէ լինի (ԱԱՕԲ, 231):

Եղիճ, ոյ, ի., միջ. հյ. աղինն, ի՝ Այլ և բոյսք և տունկք ունին բնութեամբ զէնս պահապան իւրեանց. որպէս փուշք վարդից, և քիսք հասկից, և խայթոցն աղնճին (ԳՏԳԶ, 217):

Գոյն, ոյ, ի., միջ. հյ. գուն, ի՝ Հակառակ լինայ այն առաջին գունին (ԱԱՕԲ, 22):

Ջգեստ, ու, ոյ, ի., միջ. հյ. սգեստ, ոյ, ի՝ Եւ փառաւորեաց թագաւորական սգեստիւք (ՄՆ, 203): Ամէն ցեղ կերակրոյ և զսգեստոյ հաւանի (ՎԱԱ, 229):

Ձմրուխտ, ոյ, ի., միջ. հյ. զմրուք, ի՝ Օգտութիւնն ի զմրութին համարն յիշած է (ԱԱԱԱ, 136):

Թոնիր, ոյ, ի., միջ. հյ. թունտիր, թոնտիր, ի՝ Որ էր ի վերայ թունտրի անկեալ և բոցն և մուխն ի բերանն ի ներս կու երթայր (ՎԱԱ, 285):

Լեառն, ի-ա ներքին., միջ. հյ. լեռն, լեռ, ա ներքին՝ Ոմանք ասոր լեռան գինժ կու ասեն (ԱԱԱԱ, 546):

Կոտրած, ի, ոյ., միջ. հյ. կոտրած, ի՝ Որ դնէ ներքեւ կոտրածին պինդ իրք (Գգ., 58):

Չափ, ի, ոյ, աւ., միջ. հյ. շափ, ի, ու՝ Գիտացիր, որ ի յայս ըստողութիւն շաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր մէկ մէկին հակառակ (ԱԱՕԲ, 212): Զորութիւն յաւելնայ և անցնի ի շաքուցն (ԱԱՕԲ, 212):

Երեք օրինակներում ոյ-ի և ու-ի զուգաձևութուններից պահպանվել է ոչ թե ի-ն, այլ ոյ-ը և ու-ն, ինչպես՝

Բանջար, ոյ, ի., միջ. հյ. բանճար, ոյ՝ Ի բանճարոյ և ի մրգաց զհովն և զգիճայինն տալ (ՄՀՁՄ, 19):

Շող, ոյ, ի., միջ. հյ. շող, ոյ՝ Եւ պատրաստ կալ ի գիշերուն հովէն և ի ցորեկվան շողոյն (ԲԶ, 85):

Ցալ, ու, ի., միջ. հյ. ցուլ, ու՝ Վասն կնոջ, որ ցուլն ի խելն գտվի ու սպանվի: Եւ կամ թէ ցլու տայ սպաննել (ՍՍԴ, 94—95):

Ազոար և գայլ բառերը, որոնք գրաբարում ունեին ու-ոյ և ոյ-ու զուգաձևութունները, միջին հայերենում, ստանալով ակոս և գալ ձևերը, պահպանել են ու հոլովումը, ինչպես՝ Ձակոսու արիւնն շող շող կաթեցո, հանէ զմազն (Ալէք., 22ա): Որ է գալուն թրիքն (ԱԱԱԱ, 152):

դ) Հոլովաձևի և հոլովական թվի փոխանցումներ

Այս փոխանցումները դրսևորվում են հիմնականում ուղղական-հայցա-

կան հոլովումներում, երբ մի դեպքում հոգնակիաձև հայցականը գործածվում է եզակի ուղղականի, մյուս դեպքում հոգնակի ուղղականը՝ եզակի ուղղականի փոխարեն կամ նշանակութամբ: Այս երևույթի նախնական արտահայտությունների կարելի է հանդիպել նույնիսկ դասական շրջանի գրաբարում՝ կապված մասնավորապես անեզական զոյական անունների գործածության հետ, որոնք հենց այդ ժամանակներից իսկ կարող էին հանդես գալ երկակի նշանակութամբ՝ եզակի և հոգնակի: Իսկ նման անեզականների հայցականի փոխանցվելը եզակի ուղղականի հայերենի համար խորթ երևույթ է: Այսպես, օրինակ, արդի հայերենի շոքս թվականը, որ բառի ուղիղ ձև է, գրաբարի անեզականաձև շոքս թվականի հոգնակի հայցականաձևն է: Ինչ վերաբերում է վերը ասվածին, միջին հայերենն ընձեռում է ահա այսպիսի փաստեր՝

1) Հոգս, հոգն. հայց., միջ. հյ. հոգս, եզ. ուղղ.՝ Որ հոգս ունի՝ փարատէ զհոգսն (ՄՀՁՄ, 15):

Մաւրուս, հոգն. հայց., միջ. հյ. մուրոյս, մաւրուս, եզ. ուղղ.՝ Թէ ոք որ սովորութիւն անէ պինթուզին միսն շատ ուտէ, մազն եւ մուրուան թափի շուտով (ԱԿՊ, 74):

Պահս, հոգն. հայց., միջ. հյ. պաս, եզ. ուղղ.՝ Վաղն մեծ պասն է եւ այսօր մեծ բարեկենդան է (ՎԱԱ, 165):

2) Բանալիք, հոգն. ուղղ., միջ. հյ. բալնիք, բալիք, եզ. ուղղ.՝ Զդուռն փակեցին եւ զբալնիքն առին (ԺԴ, հձԿ, 275): Օրհնեալ եղիցի այն մարդն որ զբալիքն շէր թագուցեր (ՎՍ, 32):

Բերանք, հոգն. ուղղ., միջ. հյ. բերանք, եզ. ուղղ.՝ Թէ ի մէկ ապիկած պտուկ մըն հոռոմ ձէթ լնուս... եւ բերանքն ծածկես (ԱԱԱԱ, 83):

Գիրք, հոգն. ուղղ., միջ. հյ. Գիրգ, եզ. ուղղ.՝ Որ զգիրգս զայս զարդարեաց ծաղկով (ԺԾ, հձԿ, Բ, 312):

Հարցմուք, հոգն. ուղղ., միջ. հյ. հարցմունք, եզ. ուղղ.՝ Մարիկս ալ հարցմունք արաւ (ԳԺՏ, 203):

Հրամանք, հոգն. ուղղ., միջ. հյ. հրամանք, եզ. ուղղ.՝ Վասն որոյ հօր հրամանքին ոչ կամի կեալ (Պատմ., 180):

Հրաւերք, հոգն. հայց., միջ. հյ. հաւերք, եզ. ուղղ.՝ Եւ հաւերքն որ պարունն զճորտն հրաւիրէ յընչիկ բան, կամի ծառութիւն, նա պիտի որ ճանշած շատչի լեզուով ու խօսօք լինի (Անս., 9):

Ձեռք, հոգն. ուղղ., միջ. հյ. ձեռք, եզ. ուղղ.՝ Հոգին ի մարմնոյն ձեռքն կու գողայ զերդ ի ջերմնոցի (ՖրԴ, 492):

Ճաշոց, հոգն. սեռ.-տր., միջ. հյ. ճաշոց, եզ. սեռ.-տր.՝ Տուր... ճաշուցն զարէջուր, եւ կէսօրն խիարի ջուր (ԱԱՕԲ, 497):

Մատանիք, հոգն. ուղղ., միջ. հյ. մատնիք, մատնիկ, եզ. ուղղ.՝ Մատնիկդ ի վեր կայնուլ պիտիս, հետ մօլլանուն ժուռ գալ պիտիս (ՀԹ, 229): Եւ ճուհին կարեաց փոքրիկ կտաւէ մատնիք մի եւ ձգեաց ի վերայ քրձու միոյ (ՎԱԱ, 27):

Ճաշք, հոգն. ուղղ., միջ. հյ. ճաշք, եզ. ուղղ.՝ Յառաւօտէն մինչի ճաշք Գ ժամն տաք է և կակուղ, որպէս գարնան եղանակին (ԱԱՕԲ, 95):

Շնորհք, հոգն. ուղղ., միջ. հյ. շնորք, եզ. ուղղ.՝ Դու համասփիւռ ծաղկի նման, շնորք տեալ իմաստութեան (ՀՄ, 68):

Ուշք, հոգն. ուղղ., միջ. հյ. ուշք, եզ. ուղղ.՝ Մինչեւ ուշքն դարձեալ՝ զվեննա տեսանէր (Պատմ., 134):

Ոտք, հոգն. ուղղ., միջ. հյ. ոտք, եզ. ուղղ.՝ Պատահեցաւ ոտքս քարիս՝ անկայ ի կոր յատակ որմիս (ԺԾ հձԿ, Բ, 27):

Կ) Փոփոխություններ հոգնակի ուղղականի կազմության մեջ

Հուլիական համակարգի բնորոշ կողմերից մեկը հոգնակի ուղղականի կազմութիւնն է: Գրաբարում հոգնակի ուղղականի հոլովակերտ մասնիկը Ի-ն էր, շնայած դրան ղուգահեռ կային հոգնակիութեան իմաստը դրսևորող բազմաթիւ այլ մասնակի իրողութիւններ ևս: Միջին հայերենում արմատապես փոխվում է պատկերը. գրաբարյան հոգնակերտ Ի-ն մեծապես նեղացնում է իր գործածութեան շրջանակները, որին փոխարինելու են գալիս ու մեծ ակտիվութիւն հանդես բերում բազմաթիւ նոր հոգնակերտ մասնիկներ, ինչպիսիք են՝ եր, ներ, նի, վի, վտի ևն: Այս փոփոխութիւններն ընդգրկել էին նաև միջին հայերենի գրաբարաշերտ բառերը, որոնց մի մասը նույնպէս հոգնակի ուղղականն սկսել էր կազմել եր, ներ, վի (ւի, ուի) մասնիկներով: Ահա՝

Աչք, միջ. հյ. աչ, հոգն. եր, վի, ուի՝ Աչեր ունիք գէտ զծովեր (ՉԹ, 142):  
Նայ աշուին գորփի եւ խորվնայ: Այս նեղոտքս քրտնեն յոլով, եւ գորփնան աշվին, եւ կարմրեն այտքն (Գր. 15, 115):

Անդրշահոտ, միջ. հյ. անուշահոտ, հոգն. եր՝ Եւ անուշահոտեր տուր, որ հոտայ (ԱԱՕԲ, 423):

Ապրանք, միջ. հյ. ապր. հոգն. ներ՝ Ապա թէ այլ օտար ապրներ կենայ ի դուրք ի վերոյ անուանեալ ապրնացն, նա զայն հաւսար բաժնեն ի վերայ այլ քոյրվտոյն (Անս., 21):

Բանջար, միջ. հյ. բաննար, հոգն. նի՝ Եւ զերդ այլ բանճարնի քամի շայնել (ԱԱԱԱ, 82):

Գառն, միջ. հյ. գառ, հոգն. եր, ներ՝ Թէ ոչխարն արծի՝ շատ զառեր բերէ (ԱԱԱԱ, 548): Գառներ, ձեր ծնօղն եմ ես, որ երթամ, այլ ոչ գամ ի տուն (ՖրԴ, 490):

Գիրք, միջ. հյ. գիրգ, հոգն. եր՝ Եւ պասմա գրգեր բերին (ՄԺ, ն, 172):

Գոյն, միջ. հյ. գուն, հոգն. եր՝ Եւ են ազգեազգ գուներ (Գր., 35):

Գործատուն, միջ. հյ. գործնատուն, հոգն. եր՝ Շինէ եւ սրբաշէն տրապէզս եւ գործնատներս (ԳՏԳԶ, 738):

Գրաւական, միջ. հյ. գրաւկան, հոգն. նի, եր՝ Զի կու հրամայէ օրէնքս՝ թէ երբ զգրաւկնուն կամ զպոխստիմոնին վճարն հայնց ուժով կու տայ առնուլ (ՍՍԴ, 119), Այնժամ ազատեմ զվերոյգրեալ գրաւկաններս ի Տեմուշէն (Կամ. արձ., 111):

Եղունգն, միջ. հյ. ըղունկ, ըղունկն, հոգն. եր, վի՝ Այն խոցերն, որ ըղնկներուն տակն կու լինի (ԱԱԱԱ, 448): Զայն արա, որ ըղնկվին շրնկնի (ԱԱՕԲ, 448):

Երէց, միջ. հյ. էրէց, էրեց, երից, հոգն. նի, ներ՝ Զաբեղաներն եւ զերիցնին, զկուլակներն ածիլեցին: Օլախ երիցներ շուրջ եկին (ՄԹ, 92, 93):

Զեռն, միջ. հյ. ձեռ. } հոգն. վի՝ Սէրս ալ գէմ ոտվի ունի ու ձեռվի զէտ  
Ոտն, միջ. հյ. ոտ. }  
զհարամի (ՆԺ, 47):

Որք, միջ. հյ. հորք, հոգն. եր՝ Ի գոմշին հորթերուն աղին կու ժողվի այն խոտերն (ԱԱԱԱ, 159):

Քոյր, միջ. հյ. փուր, հոգն. եր՝ Հարք եւ եղբարք իմ պատուական, մարեր, քուրեր ամենեքեան (ՄԹ, 110):

Նկատելի են ձևաբանական այլ առանձնահատկութիւններ ևս. հայտնի է, որ միջին հայերենում տարբեր հոլովման բառերի համար ընդհանրացման միտում է հանդես բերում եզակի և հոգնակի գործիականում ով վերջավորութիւնը, իսկ հոգնակի թեք հոլովներում՝ ոյ հոլովումը, որը բազալ ձայնից առաջ սովորաբար փոխվում էր ու-ի: Այս իրողութեան օգտին են



խոսում նաև միջին հայերենի գրաբարյան բառաշերտում հանդիպող առանձին օրինակները՝ ունով, սւտով, աշերով, գրաւկնուն, ըղկկներուն, իրից-նոյն, հորթերուն, ուներուդ ևն: Բնագրային օրինակներ՝ Աշօք-ունովն արաւ ինձի, արե՛կ առ իս, իմ սիրելի (ՀՄ, 76): Երբ ձիաւորն լինի ուժով ու հասուկ ու սրտով (ԲԶ, 77): Աղւոր սուրաթ, թուխ աշքերով, քան զչինար՝ սալվի պոյով (ՀՄ, 83): Իրենց իրիցնոյն եւ ալոկերոյն բահրամայ կոչեն (ԱՔ, 322): Արի, որ պագնեմ, ուներուդ կարօտ չի մնամ (ՆՔ, 107):

## Բ. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՒՄ

Խոսելով միջին հայերենի դերանվանական հոլովման հիմնական առանձնահատկութիւնների մասին՝ Լ. Հովսեփյանը գրում է. «Միջին հայերենում նույնպես, ինչպես և գրաբարում, դերանվանական հոլովման հիմնական առանձնահատկութիւններն են մի կողմից՝ եզակի և հոգնակի, մյուս կողմից՝ ուղիղ և թեք հոլովածների տարարմատութիւնն ու տարահիմքութիւնը (սուպլետիվիզմ), հոլովիչների բացակայութիւնը, հիմքի և վերջավորութիւնի սերտաճումը:

.... Միջին հայերենի դերանվանական հոլովումը, — շարունակում է նա, — նույնպես, ինչպես անվանականը, բնորոշվում է զգալի անմիօրինականութեամբ, որ արտահայտվում է նույնիմաստ հոլովածների տարբերակների առատութեամբ»<sup>3</sup>:

Լիովին ընդունելով այս դիտողութիւնները՝ պետք է ավելացնել նաև, որ միջին հայերենի դերանվանական հոլովման խայտաբղետ փոփոխութիւնների ընդհանուր ֆոնի վրա նկատելի են ինչ-ինչ յուրահատկութիւններ, որոնք դրսևորում են ընդհանրական դառնալու առանձին միտումներ, շնայած լեզվի զարգացման հետագա փուլերում միշտ չէ, որ ծավալվում և որոշակի օրինաչափութեան են վերածվում:

Դերանվանական համակարգում տեղի ունեցած փոփոխութիւնները վերաբերում են եզակի և հոգնակի թվի թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովածներին: Ահա՛

1) Ն-ի հավելումով առաջին դեմքի անձնական դերանունը հոգնակի թվում դառնում է մենկ, իսկ երկրորդ դեմքինը եզակի թվում՝ դուռ, որոնք հետագայում վերածվում են ընդհանուր օրինաչափութեան հայերենի տարբեր դրսևորումների համար՝ Բայց մենք տեսանեմք շատ մարդիկ (ՄՀԶՄ, 36): Զի մենկ յայս կանոնս շամարձակեցաք այլ ինչ գրել (ՍՍԴ, 36): Որ մենկ քննենք զայս կեանքս ու զայն (ՖրԴ, 297), Եւ մենկ ի յահէ նոցին սասանիմք (ԺԴ, հճհ, 599): Նա մենկ այլ վայր յիշենք (ԲԶ, 91): Հաւասար գնալու ենք մենկ, զի այն կեանքն է մեզ հայրենի (ՄՆ, 167), Դուն ալ մէկ վարձկունք արա, պագ մի տուր դնչիդ մօտերուն (ՆՔ, 214):

2) Ինքն անձնական դերանունը, կորցնելով բառավերջի և-ն, դառնում է ինք, ինչպես՝ Եւ ի յոր ոտք որ կենայ սպիտակ ու կենայ ի ինք սեւ մագեր խառն, նա ասեն իր աշխառ (ԲԶ, 58): Եւ այլ որ շունի ինք կարիք (ՄՀԶՄ, 13): Եւ մեզ տեւ է ինք հրաման (ԿԵ, 133): Թէ ինք իր նման գտեր, թող ազիզ արեւս ապրի (ՆՔ, 161):

3) Իւրեանք > իրենք, որ հետագայում ընդհանրապես վերածվում է հոգնակի ուղղականի կայուն ձևի, ինչպես՝ նոյնպէս զմահ եւ զհոգեբարձութիւն երիցանց իրենք այնեն (ՍՍԴ, 27): Կու առջնտրեն գիս, ու իրենք կու վճարվին (Անս., 41):

<sup>3</sup> Լ. Հովսեփյան, «Ակնարկներ միջին գրական Բայերենի պատմության», Բ. II, էջ 88:

4) Այս, այդ, այն ցուցականները համապատասխան հնչյունափոխությամբ դառնում են աս, ստ (ադ), ան (հոգն. ուղղականում աս-ը լինում է ասոնֆ), էս, էտ (էդ), էն, *ինչպես՝ Աս կարդա, կիզել, ու տես, թէ վրադ ինչեր կու քաշէի (ՆՔ, 173): Յանէ ի վրայ ան խթին (ԲԶ, 86): Յորժամ ասոնֆ անցանի՝ եւ երական այլ ի տեղ գայ (ԱԱՕԲ, 70): Ով որ լինա՝ թէ քրիստոնեայ եւ թէ այլազգք, աս քեզ աւանդ (ԺԾ հճհ, Ա, 345): Էս աշերուն նման ծովեր՝ մարդ չի տեսեր ծով ծիրանի (ՄԽՏ, 350), Էտ ամէն հաւունք, խոնարհիք հաւսար (ՀՄԺԵ, 378): Էն հոտն որ ի քէն բուրաց՝ զհոգիս կու վառէ (ԱԱ, 29):*

5) Սա, դա նա > իսա(յ), իտա(յ), ինա(յ), իսկ նա-ն հոգն. ուղղականում լինում է նաֆա՝ Պարոնա՛յք, իսայ գրաստս իմ է. լկամ փրթաւ, ու հիմա գտայ զինքս հետ իսա մարդոյս (Անս., 63): Որ ինա հաստ վիզն բարակի (ՎԱԱ, 302):

Զինա փռչին որ քուշտիկ բռնողնուն ի մօյտանն կու լինի, առնուն (ԱԱԱԱ, 383): Որ թէ նաֆա չէին հանդիպիլ ի հօն, նա կու սպանէր զիս մինչև իսպառ (Կամ. արձ., 165): Ու ասէ՝ թէ զիտայ պատրաստ արա, ու նա շայնէ (ՍՍԴ, 152):

7) Անվանական հոլովման մեջ դրսևորվող առանձնահատկություններից մեկը՝ եզակի և հոգնակի գործիական հոլովներում ով վերջավորության ընդհանրանալու տենդենցը, իր արտահայտությունն է գտնում նաև դերանվանական հոլովման մեջ, որտեղ տարբեր տեսակի մի քանի դերանուններ և՛ եզակի, և՛ հոգնակի գործիականում ստանում են ով վերջավորությունը, *ինչպես՝ ֆէնով, անով, ատով, այտով, ձենով, իրենցմով, դացմով, նացմով՝ Ի շար պատահմանց ֆէնով ես փրկիմ (ՀԵ, 198): Անով արեր է շատ մոլոր (ԿԾ, 164): Ատով խոցեցիր դու զիս (ՆՔ, 46): Զի ես այտով շատ մարդ եմ ամօթերես այրել առջև խալիֆայնոյ ու պարոնաց (ԲԶ, 74): Ով ի ծով աշխարհիս նաւիլ յօժարի, թող ձենով նաւ զուգէ որ յեզր Էլանի (ՀԵ, 196): Որ կան ի մարդոյն ներքսեւն եւ իրենցմովդ է կենդանութիւն մարդոյն (Աբուս., 216): Որ աշքն դացմով գոյանյ ի յըղեղէն (Աբուս., 213): Ողորմեցէք աղքատաց ու նացմով զմեղքն քաւեցէք (ՖրԴ, 485):*

8) Որոշ դերանուններ որոշակի միտում են դրսևորում՝ եզակի և հոգնակի բացառականում է-ով վերջավորվելու, *ինչպես՝ յիսնէ, ի ֆենէ, ձենէ, յինէ, յանուրմէ, ի մենէ, յիրմէ, յիրացմէ, յիրմընցնէ, յիրմնցէ, նացմէ, ի նացմէ: Ահա՛ Որ յիսնէն Էլար (ՆՔ, 99): Ով որ զքեզ յիսնէ զատէ (ՆՔ, 182): Վասն սրբոց առաքելոցն որ ի ֆենէ են ձեռնադրեալ (ՖրԴ, 320): Յինէ քեզ խապար բերեր եւ ի ֆենէ խապար մօտ ի յիս (ՆՔ, 101): Զենէ շառաք գէմ ձի թամպով (ՀՄԺԵ, 328): Եւ կամ պատճառքն ի յանուրմէ յինի (Գր., 155): Զի երբ յիրացմէ կու քակտեն՝ նա ու ի նացմէ կու քակտինք (ՍՍԴ, 40): Ու դարպասն պատեհ է որ հասկնայ զինչ նա ընդ նացա դեհաց ասէ, եւ ընդ նացմէ համարի (Անս., 51): Նա մէկ ի յիրմընցնէ կովի հետ իր (Անս., 61): Եւ զայն սարէչեքն որ կու առնէին յիրմնցէ ի գեաբերընին, յամեն սարի նոր երկուք ,նայ լառնուն յիրմնցէ (ՂԱՍ, 388): Զի ինքն յիրմէ գնաց ի ծեծ (ՍՍԴ, 12): Ինչ կուզեն այս խալիս ի մէնէ (ՆՔ, 191): Դու ի մէնէ մի վախենար, մեք շեմք ընկնիր յերդիքս ի վայր (ՀՄԺԵ, 327):*

9) Գրաբարի այս, այդ, այն ցուցականները միջին հայերենի եզակի ուղղականում հանդես են գալիս երեք տարբերակով՝ այս, այտ, այն, աս, ատ, (ադ), ան, էս, էտ (էդ), էն: Պետք է ասել, որ եզակի սեռական-տրականում և հոգնակի ուղղականում ու սեռական-տրականում առաջին երկու տարբերակներն էլ, չնայած անունների պես որոշակի հոլովիչներով չեն հոլովվում, այնուամենայնիվ դրսևորում են ականհայտ միօրինակություն: Այսպես՝ այս,

այտ, այն ձևերը նշված հոլովներում լինում են՝ այսու—այսոն, այսու—այսոն, այնու—այնոն—այնոն: Չնայած այս-ի և այտ-ի հոգնակի սեռական-տրականի ձևերի (այսոնց կամ այսոց, այտոց) համար ուսումնասիրած աղբյուրներում առանձին օրինակներ չեն հանդիպում, սակայն, ելնելով լեզվի զարգացման ներքին տրամաբանությունից, պետք է հնարավոր համարել նաև դրանց առկայությունը, որով ամբողջական կդառնային հետևյալ համապատասխանությունները՝ այս—այսու—այսոն—այսոն (այսոց), այտ—այտու—այտոն—այտոց, այն—այնու—այնոն—այնոն<sup>4</sup>:

Էս, էդ (էտ), էն ձևերից թեք հոլովներում հանդիպում է միայն էն-ը՝ էնու:

Բնագրային վկայություններ՝ Այսոր սահել ասեն (ԱԱԱԱ, 539): Թէ այսու որ ձն՝ որ շոր լինի, կէս դրամ տորբեն (Գր., 135): Եւ թէ այսոն շօգտէ՛ զկեսն վերո՛ւր (ԱԱԱԱ, 135): Այտոն են, ճանանչենք բժիշկքն (10): Այնու պատճառքն բորբոս մաղձերն են (Գր., 127): Եւ այնոն որ ատղ եւ վատուծ են, պաք շատ կու բռնեն եւ զկերակուրն քիչ կուտեն (ԱԱՕԲ, 61): Վասն այնոց որ անընգմահ լինին (ՍՄԴ, 114): Էնու իրատունքն եւ դատաստանն ի մեր դարպասն լինի (ՂՅ, Ա, 261):

Գրաբարում այս, այդ, այն դերանունները թեք հոլովներում ունեն զուգահեռ ձևեր՝ այսու—այսուրիկ, այդու—այդուրիկ, այնու—այնմիկ են: Միջինհայերենյան այսու, այտու, այնու ձևերի ծագումը պետք է կապել գրաբարյան այսուրիկ, այդուրիկ, այնուրիկ ձևերի հետ, որոնք, կորցնելով իկ մասնիկը, դառնում են՝ այսու, այտու, այնու՝ անունների պես ընդհանուր և՛ սեռական, և՛ տրական հոլովների համար:

Իսկ ինչ վերաբերում է այսոն, այտոն, այնոն հոգնակիների առաջացմանը, ապա դա պետք է կապել գրաբարի հոգնակի ուղղականի երկրորդ ձևերի հետ՝ այսոնիկ, այդոնիկ, այնոնիկ, որոնք, հապավելով իկ մասնիկը, իսկ առաջինը ստանալով նաև լրացուցիչ և հնչյունը, վերածվում են միջինհայերենյան նշված ձևերի: Սրանց հոգնակի սեռական-տրականը կազմվում է որոշակի օրինաչափությամբ՝ հոգնակի ուղղականի Բ-ն փոխելով ց-ի՝ այսոն—այսոնց, այտոն—այտոց, այնոն—այնոց:

Նույն ճանապարհով պետք է առաջացած լինեն նաև աս, ատ, (ադ), ան տարբերակի համապատասխան հոլովաձևերը՝ մասնակի հավելյալ հնչյունափոխությամբ, այսինքն՝ այ երկբարբառի յ բաղադրիչի անկումով և հիմքում և ձայնորդի հավելումով՝ աս—ասու—ասոն—ասոնց, ատ—ատու—ատոն—ատոնց, ան—անու—անոն—անոնց: Օրինակներ՝ Ոմանք ասու լեռան գինծ կու ասեն (ԱԱԱԱ, 546): Ատու տէրն ի յիս պիտէր (ՆՔ, 92): Բժիշկք ասացին, թէ ատոնց աղուէսու երիկամունք պիտի (ՎԱԱ, 188): Անու թարկն պիտի տալ (ՆՔ, 55): Յորժամ ասոն մանցանի՛ եւ երակն այլ ի տեղ զայ (ԱԱՕԲ, 70): Ատոնց բնութիւնն՝ ի մարդուն անձինն բնութեան մօտիկ է (ԱԱԱԱ, 3): Նայ անոնց ըկերմ այլ կու եղեր (ՄԺ, Ա, 171):

11) Դա, նա դերանունների գրաբարյան դուրա, նուրա, նոքա, նոցա ձևերի դիմաց միջին հայերենն ունի դարա(յ), նարա(յ), նաքա, նացա ձևերը, որոնք, ինչ խոսք, նշված գրաբարյան հոլովաձևերի հնչյունափոխված տարբերակներն են՝ առաջ եկած հետընթաց առնմանության հիմքի վրա, այսինքն՝ բառավերջի ա-ի ազդեցությամբ հիմքի ո-ն դարձել է ա: Վկայված ձևերը թույլ են տալիս ենթադրելու, որ գործածության մեջ պետք է որ եղած լինեն նաև սա դերանվան համապատասխան հոլովաձևերը՝ սարա, սաքա, սացա, այլև դա-ի բացակայող ձևերը՝ դաքա, դացա, որոնք ընդհանրապես մասն-

<sup>4</sup> Ս. Ղազարյան, Աշխ. աշխ., էջ 249:

նագրությամբ ավանդված շեն, իսկ եթե կան նման գրավոր արտահայտություններ, ապա դրանք գիտությանը տակավին անհայտ են մնում: Օրինակներ՝ Ապա ասացէք դաւա որ գիտնայ (ՄԵ, 109): Ես նաւայ այնպիսի անհարկիք խօսք ոչ ասի (Կամ. արձ., 329): Եւ ոչ պատեհ է որ վանց այնոր թէ նախ ի վաղէ կալել լինին զայն սինօն (Անս., 39): Ու դարպասն պատեհ է, որ հասկնայ գինչ նա ընդ նացայ դեհաց ասէ եւ ընդ նացմէ համարի (Անս., 51):

Այս ձեերին գուգահեռ՝ սա, նա դերանունների եզակի սեռականում հանդիպում են նաև սրայ և նրայ ձևերով, որոնք հետագայում դրսևորում են մեծ կենսունակություն՝ դառնալով ընդհանրական ամբողջ արևելահայ գրական հայերենի և որոշ բարբառների համար: Ամենայն հավանականությամբ սրայ, նրայ, ինչպես նաև ենթադրելի դրայ հոլովաձևերը պետք է սերած լինեն միջինհայերենյան սաւա, դաւա, նաւա կամ էլ գրաբարյան սորա, դորա, նորա ձևերից՝ ա > ր, կամ ո > ը հնչյունափոխությամբ: Ահա բնագրային օրինակները՝ Եւ սրայ հաս աղջիկն զեանդատան (ԺԾ հճՏ, Գ, 123): Նրայ բժին մի՛ տէք (ԺԾ հճՏ, Ա, 657):

12) Ես, դու անձնական դերանունները եզակի և հոգնակի տրականում ենթարկվել են որոշ փոփոխության: Ընդհանուր առմամբ, հիմքում նույնությամբ կամ մասնակի փոփոխությամբ պահպանելով գրաբարյան համապատասխան ձևերը, նրանք ստացել են իկ կամ ի վերջնամասնիկները: Այսպես, եթե գրաբարում եզակի և հոգնակի տրականում ես և դու դերանուններն ունեին ինձ—մեզ, քեզ—ձեզ ձևերը, ապա միջին հայերենում դառնում են ինձի—ինձի—բնձիկ—մեզիկ, քեզի—քեզիկ—քի: Վերջինը՝ քի, հավանաբար քեզի-ի հնչյունափոխված տարբերակն է՝ քզ-ի անկումով: Այստեղ ևս առկա ձևերը հիմք են տալիս ենթադրելու, որ մեզիկ ձևի կողքին հնարավոր պետք է եղած լիներ նաև ձեզիկ համապատասխանությունը, որը, սակայն, վկայված չէ եղած աղբյուրներում: Օրինակներ՝ Ինձի պացխուն երես կրկին (ՀՄ, 71): Զոր կամիմ, որ որդին՝ Նորսէսն ինձի ճուաբ առնէ (Կամ. արձ., 153): Եկո՛ փորէ՛ ինձի թուրպայ (ՀԱԳ, 163): Յետոյ իբեր ինձի գրել երես (ՅԶ, 2): Երբ շես սիրեր դիս, բնձիկ յէ՞ր շասես (ՂՄ, 203): Խիստ մերկ էի եւ աղթատ՝ մեզիկ ծածկոյթ արարաք (ԺԾ հճՏ, Գ, 439): Դու սին էիր հայոց՝ մեզիկ (ՀԹ, 199): Համբերել պարտ է քեզի (ԿԵ, 215): Եւ Նորսէսն ասաց, թէ ես պարտական քեզի շեմ (Կամ. արձ., 153): Բարձիր, հետ քեզիկ (ՊՅՄ, 74): Ուրախացիր վանց իմ սրտիս, ես քի գերի յաստնորիս (ՀՄ, 71):

Եզակի սեռականում գրաբարյան Իո-ն առանձին ղեպքերում դառնում է Իու, ինչպես՝ Զորնայ Իու ատ շոր բազկիկդ (ԳԺՏ, 46):

13) Բավականին փոփոխություններ են կատարվել ինքն և իւր անձնական դերանունների ուղիղ և թեք ձևերում: Արդեն նշվել է, որ ինքն դերանունը, կորցնելով վերջին ն-ն, միջին հայերենում ստանում է ինք ձևը: Այս դերանվան եզակի և հոգնակի թվի մնացած հոլովաձևերը որևէ փոփոխությամբ վկայված չեն: Հայտնի է, որ սրդի գրական հայերենում նշված դերանունը պահպանվել է իր գրաբարյան տեսքով, այն տարբերությամբ միայն, որ, համաձայն ժամանակակից ուղղագրական կանոնների, առանձին դիրքերում բառավերջի ն-ն կարող է դառնալ ր: Իսկ որտեղի՞ց են գալիս արդի հայերենի ինքն դերանվան թեք ձևերը՝ իր, իրեն, իրենից, իրենով, իրենք, իրենց, իրենցից ևն: Ինչպես պարզ կարելի է տեսնել հենց առաջին հայացքից, սրանք որևէ առնչություն չունեն գրաբարի ինքն դերանվան թեք ձևերի (ինքնան, ինքնեմ, ինքնամ, ինքնանք, ինքնանց ևն) հետ: Միջին հայերենի վերոհիշյալ ձևերը (իր, իրեն, իրենք, իրենք, իրենց ևն) ուղղակիոր-

րեն բխում են գրաբարի իւր անձնական դերանվան համապատասխան ձևերից՝ իւր, իւրեանք, իւրեանց՝ հիմնականում իւ>ի և եա>ե հնչյունափոխությամբ: Այս ընդհանուր օրինաչափությունից մասամբ դուրս են մնում միայն եզակի տրականի իւրան, իւրեն և իրեն տարբերակները: Պետք է ենթադրել, որ հոգնակի սեռական-տրականի իւրեանց ձևի ազդեցությամբ առաջ է եկել սկզբնապես իւրեան ձևը, իսկ սա էլ, ենթարկվելով հնչյունափոխական հանրահայտ կանոնների, հետագայում վերածվել վերոհիշյալ երեք տարբերակների: Օրինակներ՝ Դէմ իւր պարիսպ զարնեմ ու պատ: նա ես իւր տա:մ նշան (ԿՅ, 184, 188): Ոսկորքն ալ տաճար շինենք, իւր թեպուրն այն տաճարին աճար (նՔ, 219): Ես աղեկ եմ հետ իրեն, ինքն է հետ ինձ սրտովն վատ (ԿՅ, 185): Եւ զիր սիրողին անամօթ բաներն իրենն ասեն (ԱՒՕԲ, 157): Նոյպէս զմահ եւ զհոգեբարձութիւն երիցանց իրենք այնեն (ՍՍԴ, 27): Ու թէ տղայքն զիրենց հասակն շուննան՝ նա շկայ յանսիզն որ իսկի իւրնց պացխուն պարտին որ այնեն, ինչուր զիրենց հասակն առնուն (Անս., 51): Շաքարն իւր լեղի թուի եւ լեղին իւրան խմելի (նՔ, 252): Փոքրիկ դռնակ իւրեն թողին (ՄԹ, 91): Եւ իւրեմքն են, որ քաշեն զգիշութիւնսն եւ թափեն ի բերանն (Գր., 102):

Ինչպես արդեն նշվել է, հոգնակի գործիականում այս դերանունն ստանում է ուլ (մով) վերջավորությունը՝ իրենցմով:

14) Փոփոխությունների ընդհանուր ծիրից դուրս չեն մնացել նաև փոխադարձ դերանունները՝ իրեաց, միմեանց: Այստեղ ևս գործում են հայերենի հնչյունափոխական կանոնները: Այսպես, օրինակ, եա>ե հնչյունափոխական կանոնի համաձայն՝ գրաբարյան միմեանց-ը դառնում է միմեց, ե-ի անկումով իրեաց-ը՝ իրաց, իսկ վերջինս էլ ր-երից մեկի սղումով՝ իրաց: Այս ամենից բացի՝ միջին հայերենում սկսում են կիրառվել իրեաց փոխադարձի երկու նոր այլ տարբերակներ ևս՝ իրաւ և իրուր՝ վերջիններիս առաջացումը ավելի հավանական է պայմանավորել գրաբարյան զիրեաց ձևի առկայությամբ ու ազդեցությամբ: Վերջինս, իբրև հոգնակի հայցական, կորցրել է հայցականի ց հոլովակերտը և եա>ա հնչյունափոխությամբ դարձել իրաւ, իսկ սա էլ ա>ու փոփոխությամբ՝ իրուր: Օրինակներ՝ Բաժանեցան թիկանց զօթուածքն ի միմեց (Գր., 71): Աղքատսիրութիւնն ու պահք եւ աղօթքն ընկերք են իրաց (ՖրԴ, 499): Ու շորս բնութիւն օտար հետ իրաց կասեն թէ սազէ (ՀՅ, 161): Եւ ամրցնեն զվկայութիւնն նշանովն որ տան իրաւ (Անս., 27): Զերկու ձեռքն իրաւ ի զարկ եւ բարկ-բարկ ինքն ծիծաղեաց (ՀՅ, 225): Եթէ յերբ հիանդն քնանայ եւ աչից սպիտակուցն երեւնայ եւ կոպքն յիրուր շհասնին... նայ այտ մահուն նշան է (Գր., 202):

Բացառական հոլովում ևս հանդես են դալիս գրաբարից տարբեր ձևեր՝ յիրաւմէ, յիրացմէ, որտեղ է-ն, իբրև բացառականի հոլովակազմիչ, ինչպես արդեն նշվել է, տարածվելու ակնհայտ ակտիվություն էր դրսևորում: Օրինակներ՝ Երբ եղբարք կենան ու յիրաւմէ բաժնվին (ՍՅԴ, 112): Վասն որ եղբարքն յիրացմէ բաժնվին (ՍՍԴ, 112): Որ ի պճկուքն կաչ արձակ յիրացմէ (ԲԶ, 47):

15) Հարցական դերանուններից է՞ր սեռականաձևը միջին հայերենում հաճախ գործածվում է նոր ձևով՝ յէ՞ր, որը միջին հայերենի հնչյունափոխական այն առանձնահատկություններից մեկն է, երբ բառասկզբի ձայնավորից առաջ ավելանում է յ: Օրինակներ՝ Յէ՞ր ուշացար (ՎԱԱ, 287): Աճապ, աս յէ՞ր կու դատիս (ՖրԴ, 113): Բարեւ յէ՞ր շես ի տար (ՀԹ, 223): Ռատի յէ՞ր շես կենար որ կու սիրեմ զքեզ (ՀԱԳ, 168):

### 3. Բայասեռի և հաբաբուցային ձևերի փոփոխություններ

Միջին հայերենի շրջանում անհամեմատ շատ փոփոխություններ կրող խոսքի մասերից մեկը բայն է: Փոփոխություններն ընդգրկել էին տարբեր բնագավառներ՝ հնչյունական, բառակազմական, իմաստաբանական, ձևաբանական ևն: Ստորև կխոսվի միայն այն տեղաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել բայասեռի և հաբաբուցային ձևերի ոլորտներում:

#### ա) Բայասեռի փոփոխություններ

Կան բավական թվով գրաբարյան այնպիսի բայեր, որոնք միջին հայերենի շրջանում կրել են սեռային փոփոխություններ՝ պայմանավորված հիմնականում բայիմաստի, մասամբ էլ նաև լծորդության, բայածանցների փոփոխությամբ և այլ հանգամանքներով: Սա նշանակում է, որ մի դեպքում բայը կարող է ունենալ սեռային փոփոխություն, առանց ձևային որևէ փոփոխության, մյուս դեպքում սեռային փոփոխությունը ուղեկցվում է ձևային այս կամ այն փոփոխությամբ: Ինքնին հասկանալի է, որ առաջին պարագայում Վճորոշ նշանակություն ունի իմաստային գործոնը, երկրորդում՝ կ՝ ձևը, կ՝ իմաստը: Ծավալային առումով բայասեռի փոփոխությունները լինում են երկու տեսակ՝ լիակատար և մասնակի: Լիակատար փոփոխությունը կապված է հիմնականում ոչ տարասեռ բայերի հետ, երբ բայի տվյալ սեռն ամբողջությամբ փոխանցվում է մի այլ սեռի կամ սեռերի: Իսկ մասնակի սեռային փոփոխության ենթարկվում են տարասեռ բայերը, որոնք, պահպանելով սեռային նշանակություններից մեկը, փոխում են մյուսը: Ահա բնագրային վկայություններ՝ սեռային նշումներով՝

Աւաղել, ն., միջ. հյ. աւղնալ, աւաղնալ, շ. նիհարել, նիհար դառնալ՝ ի տարին Ա կաւաղնայ, եւ Ա գիրանայ (ԱԱԱԱ, 284): Զի աւղցնելն չէ հայնց, որ քաղցացնէ... որ ալղնայ (ԲԶ, 68):

Բիւել, ն. շ., միջ. հյ. բիւալ, շ. դոբսս հորդել՝ հոսել՝ բիւել՝ Մէջն պաղ աղբիւր կու բիւայ (ԳԺՏ, 204):

Բոլոբել, ն., միջ. հյ. բոլրել, բոլորնալ, շ. բոլրել, բոլորակ դառնալ, կլոբ ձև ստանալ՝ Լուսնկայն բոլրէր ի նայ կամ զարեղակն, որ գայր ի մայր (ԳԹ, 255): Բոլորնայ երեսն եւ փոքրնայ (Գր., 136):

Դարմանել, ն., միջ. հյ. դարմրնալ, շ. դարմանվել, լավանալ, բուժվել՝ Իսկ դարմրնալոյն ատամանցն պատճառն այն է (Գր., 100):

Եփել, ն., միջ. հյ. 1. եփել, ն. 2. եփիլ, շ. հասունանալ՝ Մինչուր ելունդըն հասնի եւ եփի (Գր., 19):

Ընկերել, շ., միջ. հյ. ընկերել, ն. քոչլ տալ, քուլատրել, ընձեռել՝ Թէ կանայք վերցնեն՝ պատեղուորթին կու ընկերէ (ԱԱԱԱ, 139):

Ընկղմել, ն., միջ. հյ. ընկղիլ, շ. ընկղմվել՝ Զէյթուն փլաւ եւ Ապլստան կէսն ընկղեցաւ, Զէյթուն ներքեւ լեռան մնաց (ՄԺ, Ա, 171):

Խոռվել, ն., միջ. հյ. խոռվել, շ. մեկից նեղանալով՝ հարսբերությունները խզել, շխոսել:

Խողտել, ն., միջ. հյ. խտխտիլ, շ. խողտալ՝ Կապոյտ աշվին յայպած է, զի խտխտի աշքն դէմ արեգականն, ու դէմ սպիտակ իրաց (ԲԶ, 92):

Կանգնել, ն., միջ. հյ. կանգնել, շ. կանգ առնել՝ Աստուած ինձ երես երես քեզ աշեր, ու կանգնէ՛ ու տե՛ս (ՆՔ, 65):

Կարդալ, ն. շ., միջ. հյ. 1. կարդալ, ն. սովորել, ուսանել՝ Այնոր համար որ ի վարպետէ չէ կարդացել, եւ թէ կարդացել է՝ նա չէ հասկցեր, եւ կամ մոռացել (ԱԱՕԲ, 19): 2. կարդել, ն. կարդալ, ընթերցել՝ Ով կարդէ՛ յաղօթս յիշեցէք (ԴՉՎ, Գ, 37):

Կտրել, ն., միջ. հյ. կտրիլ, շ. կտրվել, գրկվել, դադարել՝ Ով որ չի սրբ-  
բաժ սա մարուխն ուտէ՝ յորդեծնութեանէ կտրի (ԱԱԱԱ, 622):

Հանդարտել, շ. ն., միջ. հյ. հանտարտել, ն. հանդարտեցնել, յաղա-  
ղացնել, հանգստացնել՝ Վասն զի շատ զինին պաղեցնէ զմարդն և հանտար-  
տէ զկրակն (Գր., 76):

Հառաչել, շ. ն., միջ. հյ. հառաջել, հառչել, հառջել, շ. հոգոց հանել,  
հառաչանք արձակել, հառաչել՝ Եւ զղջացաւ միայնայկեացն եւ ասէ լալով  
եւ հառաչանօք (ՎԱԱ, 9): Հառչելով ի հետ դարձայ, թէ գովեմ զսուրաթն  
նորա (ՆՔ, 200): Ի հոգալ լինայ, եւ հառջէ եւ սիրտն դողայ (ԱԱՕԲ, 157):

Հոգալ, ն. շ., միջ. հյ. հոխալ, ն. հոգալ, մի բանի հոգսը փաշել՝ Արի եկ  
ի նաւս զհացդ ու զկերակուրդ զխումատդ մի՛ հոխար (ՄԾ, 169):

Մակարդել, ն., մակարդիլ, շ. կ., միջ. հյ. 1. մակրդիլ, շ. մակարդվել՝  
Թէ զայս ձէթս ի կաթն կաթեցնես՝ մակրդի (ԱԱԱԱ, 104): 2. Մակարդանալ,  
շ. մակարդվել՝ Զդեղն, որ կազմէր ախտի խառնեալ, յուռութ ուլունս մա-  
կարդացեալ (ՆՄ, 121):

Մերկանալ, ն. շ., միջ. հյ. մերկենալ, շ. մերկանալ, պատյանից հանվել՝  
Սուր հրեշտակին անդ մերկենալ (ՆՄ, 114):

Նահանջել, ն. շ., միջ. հյ. նահանջիլ, շ. շունչը կտրվել, շնչասպառ լի-  
նել, շնչատել՝ Եթէ առագաստն ուռենայ... հազայ եւ նահանջի (Գր., 119):

Շաղաղել, ն., միջ. հյ. շաղղել, ն. շաղախել՝ Շաղղէ ջրով, ու շինէ խուր-  
սեր (ԲԶ, 112): 2. Շաղղիլ, շ. շաղախվել, միախառնվել՝ Ապա ա՛ռ աղ եւ  
խառնեա ի հողն ափ մի մանր, որ շաղղի յիրեար (ԳՎ, 157): Դու մեղրով  
շաղղած նուշ ուշաքար ես (ՀԹ, 150):

Շնչել, ն. շ., միջ. հյ. շնչալ, շ. 1. շնչել, Շնչայ ուժով եւ լինի փորն մեծ  
(ԲԶ, 49): Եւ թոքին ցաւերն այս են՝ խիստ հազն, եւ սակաւ շնչալն (Գր.,  
105): 2. Փշել՝ Երբ որ հարաւ քամին շնչայր, իւր ձագերուն սա մահ կու տայր  
(ԳԹ, 253):

Պարապել, շ., միջ. հյ. 1. պարպել, ն. դատարկել՝ Եւ երբ զգինիդ պար-  
պես՝ ա՛ռ գիր մրուրն եւ լի՛ց ի նոր պուտուկ (ԳՎ, 108): 2. Պարպիլ, շ.  
դատարկվել, սպառվել, վերջանալ՝ Բազումք առնուն եւ ոչ պարպի, շառնողն  
յետոյ փոշիմանի (ՀՄՀ, 326):

Պտղաւտրել, ն., միջ. հյ. Պատեղուրիլ, պատեղվորիլ, շ. հղիանալ, հղի  
դառնալ՝ Եւ թէ գեղին զփոքրին զխաղածն առնուս, եւ արուն տեսնելուն յի-  
տեւ վերցնել տաս կնոջն, չի պատեղուրի (ԱԱԱԱ, 39—40):

Յրուել, ն., միջ. հյ. 1. ցրվիլ, շ. ցրվել՝ Յրուեցան զօրքն ի գեղ եւ ի  
քաղաք (ՄԺ, Ա, 128): 2. Յրիլ, ցրվել, շ. մրազնվել, գիտակցությունը բու-  
լանալ՝ մշուշվել՝ Աշաց մթնեյն որ խելքն ցրվի (ԱԱՕԲ, 141):

### բ) Հարացուցային փոփոխություններ

Միջին հայերենի շրջանում էական փոփոխություններ են կատարվում  
խոնարհման հարացուցում, որից, բնականաբար, չէին կարող զերծ մնալ  
նաև գրաբարյան բառաշերտի բայերը: Այստեղ ևս ի հայտ են գալիս հետև-  
յալ տեղաշարժերը:

1) Ե լծորդության պարզ բայերի եաց ցոյական հիմքը, որ նույնությամբ  
պահպանվում էր գրաբարի ներգործածև խոնարհման անցյալ կատարյալի  
եզակի երրորդ դեմքում (զրեաց, սիրեաց, առաքեաց ևն), միջին հայերենի  
նույն ժամանակում հանդես է դալիս արդեն եա > ե հնչյունափոխությամբ՝  
յառնայով հետադայում համընդհանուր երևույթ ամբողջ հայերենի համար:  
Ահա՛

Այրել—այրեաց, միջ. հյ. էրել—էրեց՝ Կրակ անդաւ յերկնից եւ էրեց  
զՔաբայն՝ ԺԲ. մինարա ի հետ եւ վեց հազար ոգի (ԺԾ, ճՃՅ, Գ, 40):

Արածել—արածեաց, միջ. հյ. արծել—արծեց՝ Որ զտաւարն արծեց (ԺԾ, ՏՃՏ, Բ, 706):

Բաժանել—բաժանեաց, միջ. հյ. բաժանել—բաժնեց՝ Ու վարդապետն գրիանք բաժնեց աշակերտացն Բ. ու Գ. ու ինձ մեկ մ՝ ոչ (ԺԾ ՏՃՏ, Ա, 658):

Այս բայերի պես է սկսում խոնարհվել նաև բնդելուզանել պատճառական բայը, որ միջին հայերենում ստացել էր բնտելուզել տեսքը՝ Զարդարեաց զտապանն պատուական ահամբք, եւ բնտելուզեց մարգարտօք (ՄԼԳԳ, 58):

Գծուարիմ բայը, որ զրաբարում ուներ կրավորաձև խոնարհում, միջին հայերենում, վերածվելով է լծորդութան՝ դժարել, նույնպես ենթարկվում է այս նոր կանոնին՝ Հիմիկ դժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր (ՅՐԴ, 217):

2) Կրաբարի անցյալ դերբայի եալ վերջավորութունը փոխվում է ել և եր տարբերակների, որոնք միջին հայերենի շրջանից իսկ լայն տարածում ստանալով՝ հետագայում դառնում են համընդհանուր իրողութունն ինչպես արևելահայ և արևմտահայ մի շարք բարբառների, այնպես էլ արևելահայ և արևմտահայ նոր գրական հայերենների համար՝ ամբողջությամբ վերցրած։

Բնագրային վկայութուններ՝

Առնել—արարեալ, միջ. հյ. այրնել—այրել՝ Որ ասցել ես ու այրել զհսայ ու զհսայ (Անս., 15):

Անկանիմ—անկեալ, միջ. հյ. ընգնել—ընգել՝ Ընգել են բեռաւ մ՝ ծանոր ի մեծ գէշ մորատ (ԿԾ, 210):

Ազանիմ—ազեալ—ազոյցեալ, միջ. հյ. հաֆնել—հաֆել՝ Ակոռան է հաֆել աթլաս ու քիմխայ (ՀՄԺԾ, 377):

Դատիմ—դատեալ—դատեցեալ, միջ. հյ. դատել—դատել՝ Ես հրեք օր ի հետն եմ դատել (ՎԱԱ, 238):

Եղանիմ—եղեալ, միջ. հյ. եղնիլ, եղնալ—եղեր, Եղեր եմ խել սիրու տէր, անմատաթ ու անզէնեհար (ՆՔ, 59):

Հասանել—հասեալ, միջ. հյ. հասնել—հասել՝ Դեռ իմ սրտիս մուրատին չի հասեր, նա բարակ լուսացաւ (ՆՔ, 150):

Իջանել—իջեալ, միջ. հյ. իջնել, իջնալ—իջել՝ Վարսերդ ոսկի թելով քաշած՝ վերայ անձինդ իջեր հաւսար (ՀԹ, 158):

3) Ան սոսկածանցով է լծորդության բայերը, վերածվելով և սոսկածանցով բայերի՝ իջանել—իջնել, մտանել—մտնել ևն, անցյալ կատարյալում ներգործակերպ խոնարհումը փոխում են կրավորականի, մի բան, որ այսօր ընդհանուր օրինաչափութունն է դարձել հայերենի բոլոր սոսկածանցավոր բայերի համար։ Ահա՝

Ելանել, ելի, ելեր, ել. միջ. հյ. ելնել, ելայ, ելար, ելաւ՝ Երբ ես յարեւէս ելայ, թող ցամքի զինչ գետ կայ ի ծով (ՀԾ, 155): Թէ նուշն էիր նա աշացս ելար (ՆՔ, 158): Յորժամ քաղաքն ի թունտ ելաւ եւ մանր ու մեծ ի դող ելաւ (ԺԾ ՏՃՏ, Գ, 21):

Իջանել, իջի, իջեր, էջ. միջ. հյ. իջնել, իջայ, իջար, իջաւ՝ Ես ասօր պաղլան իջայ (ԳԺՏ, 203):

Հասանել, հասի, հասեր (ե)հաս. միջ. հյ. հասնել, հասայ, հասար, հասաւ՝ Բուն բարեկենդանրն մօտեցաւ, ուրախութեան ժամն հասաւ, արեղաթողն բարձրաւ (ՄԹ, 104):

Մտանել, մտի, մտեր, (ե)մտաւ. միջ. հյ. մտայ, մտար, մտաւ՝ Յետոյ գէմ անտեր թողին ու մտան ի հող եւ ի զնտան (ՄՆ, 123):

Եղանիմ բայը, որ զրաբարում ուներ անկանոն խոնարհում՝ եղէ, եղեր, եղն, միջին հայերենում նույնպես անցնում է կրավորակերպ խոնարհման տակ և դառնում կանոնավոր՝ եղայ, եղար, եղաւ՝ Զամէն մեզաց դարա՛ւ եղաւ:



ես կեղծաւորս եւ անխմայ (ԺԾ հձհ, Բ, 90): Պատճառն դու եղար, անհաւատիկ զքեզ (ՀԹ, 225): Եւ այլ ասենք թէ է՞ր եղաւ այս գիրքս աշխարհաբառ (ԱԱԱԱ, 25):

Առնել անկանոն բայը գրաբարում կարող էր խոնարհվել և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև՝ առաջին դեպքում ներգործական, երկրորդում կրավորական նշանակութամբ: Միջին հայերենում՝ անցյալ կատարյալի երրորդ դեմքի եզակի և հոգնակի թվում, այս բայը, պահպանելով ներգործական նշանակությունը, կրավորակերպ խոնարհման միտում է դրսևորում, ինչպես՝ Աշօք-ունովն արա՛ն ինձի, արե՛կ առ իս, իմ սիրելի (ՀՄ, 76): Զիրենց օրինացն ծէսն որ ինչպէս էր՝ արա՛ն (ԱԱԱԱ, 124): Եզակի առաջին դեմքում, շնայած կատարյալի հիմքը դարձյալ փոխված է, ինչպես վերոհիշյալ օրինակներում (արաւր > ար), սակայն պահպանված է գրաբարյան ներգործակերպ ի վերջավորութունը՝ Մէկ երկու տիկ ջուր զայ արի (ՄՂ, 102):

Բուն հրամայականի հոգնակի երկրորդ դեմքում ևս փոխվել է այս բայի կատարյալի հիմքը, բայց պահպանվել է ներգործակերպ էլ վերջավորութունը՝ Բարեացն սիրող լերո՛ւք, գործեցէք եւ արէ՛ք ձեզ անուն (ՖրՒ, 490):

4) Ե լծորդության պարզ բայերի բուն հրամայականի եզակի թվում եա > ե հնչյունափոխութամբ նոր ձևերի առաջացումը, որ լայն թափ էր ստացել միջին հայերենում, իր ոլորտի մեջ է առնում նաև գրաբարաշերտ միջինհայերենյան բառերը, ինչպես՝

Արձակել—արձակեա՛, միջ. հյ. արձկել—արձկէ՛՝ Այսօր արձկէ՛ զհանգուցդ մինչ ես ի կենդանութիւն (ՖրՒ, 370):

Եփել—եփեա՛, միջ. հյ. եփել—եփէ՛՝ Ա՛ն բարունիճ եւ մանիշակ, զայսոնք եփէ՛ ջրով (ՄՀՂՄ, 69):

Քարսւել—քարսւեա՛, միջ. հյ. քաթխել—քաթխէ՛՝ Ի յայդ տրորածտ խանէ՛ եւ քաթխէ՛ զկտան (ՄՀՂՄ, 33):

Ժողովել—ժողովեա՛, միջ. հյ. ժողւել—ժողւէ՛՝ Զամէնն ի մէկ տեղ ժողվէ՛ (ՄՀՂՄ, 45):

Ծեփել—ծեփեա՛, միջ. հյ. ծեփել—ծեփէ՛՝ Զայսոնք եփէ՛, եւ ծեփէ՛ (ՄՀՂՄ, 69):

Կոտորել—կոտորեա՛, միջ. հյ. կոտրել—կոտրէ՛՝ Թէ... տէրն ասէ ընդ մարդ, թէ ձգէ կրակ կամ կոտրէ՛ կամ արա զինա բանն (ՍՍԴ, 118):

Ե լծորդության պարզ բայերի պես են խոնարհվում նաև ան սոսկածանցավոր արձակել և մտանել բայերը: Միջին հայերենում այս բայերը, ստանալով մտնել և օծել ձևերը, բուն հրամայականի եզակի ձևերը ևս (գրաբարում լինում էին մո՛տ և օ՛ծ) կազմում են Ե լծորդության պարզ բայերի պես՝ Թէ մազ չի բուսնի, ի բաղնիք մտէ՛ եւ մէկ քանի տարպայ օծէ՛ (ԱԱԱԱ, 34):

5) Որոշ դեպքերում անկանոն խոնարհման մեջ կանոնավորման միտում է նկատվում: Այսպես, օրինակ, անկանոն բայերից ըմպել-ը, որի՝ կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերը լրացվում էին արքենալ բայի համապատասխան ձևերով, նշված ժամանակներում ևս խոնարհվում է Ե լծորդության կանոնավոր պարզ բայերի պես: Ահա՛ Լմբեցին զգինին եւ հարբեցան (ՎԱԱ, 182):

6) Ու և ի լծորդության պարզ բայերը, վերածվելով Ե լծորդության պարզ բայերի, կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում խոնարհվում են հենց Ե լծորդության պարզ բայերի պես՝ ցոյական հիմքով և ներգործաձև վերջավորությամբ՝ Զայս իմ կարկուն վզիկն՝ ականճէ՛ ականճ՝ զենեցին (գրաբար՝ զենին) (ՀՄԺԾ, 226): Հաշուց (գրաբար՝ հաշուեցաւ) թէ ջօհարունի և առչեւ խոզին կու թափէ (ՀԾ, 143):

7) Պատճառական բայերի խոնարհման մեջ բուն հրամայականի եզակի

թվի երկրորդ դեմքում գրաբարյան ու վերջավորութունը դառնում է ու՝ Հա-  
պեր արա տափակ, շորցո՛ւ եւ տուր ժմուն Ա հապ (ԱԱՕԲ, 278):

8) Երբեմն ներգործածե խոնարհվող ա լծորդության գրաբարյան պարզ  
բայը, միջին հայերենում ձևափոխվելով, փոխում է խոնարհման տիպը՝ ներ-  
գործակերպից անցնելով կրավորակերպի, ինչպես՝ Եւ դու ընդէր աւատացար  
(գրբ. հաւատացեր) ինձ (ՎԱԱ, 59):

9) Ըղձականի կամ ներկայի իմաստով գրաբարյան ներկա ժամանակի  
հոգնակի առաջին դեմքում եմէ՛-ը դառնում է ենէ՛, իսկ հոգնակի երրորդ  
դեմքի են-ը՝ ին՝ Ինչ այնեւնէ, ցամաք տեղ շկայ, փեշարն թաց շուր կու լինայ  
(ՀՄ, 123): Ափրեւնէ շատոց տուն ու տեղ (ՆՔ, 96): Ու կու համեւնէ քեզ որ  
գիրենք ի վրայ այն համնացն տաս պահել, որ մեր հայրն է պարգեւել իրենց  
(ՂՅ, Ա, 261): Զերայ քենով ինէ ի կենդան (ԿԾ, 132): Բայց գի մարդ ին  
հողեղէն ու ծնեալ ի մարդոյ, շկարացին մարդկան օգնել ու ազատել ի մա-  
հոյ (ՀԾ, 213): Եւ տուր բաժին ինձ յայն հոգոյն որ շատոք ին ցանգացել  
(ԿԾ, 126): Այտոք են, որ ճանաչեւն բժիշկքն (Գր., 10):

10) Միջին հայերենում շատ լայն տարածում ունի արե՛կ բայածէր, որ  
ծագում է գրաբարի արի՛ ե՛կ կապակցութունից՝ ի-ի սղումով և նշանակում  
է արի՛, ե՛կ, վեր կանց եկ՝ Կասեի, թէ՛ Արե՛կ, ե՛լ այգուս (ԳԱ, 254): Բանամ  
զժոցս, արե՛կ մուտ ի ներս (ՆՔ, 127): Արե՛կ աշերուս իմ լոյս (ԿԾ, 160):

**Г. М. АВЕТИСЯН — Морфологические изменения в грабаровском пласте лексики среднеармянского языка.**— В статье исследуются изменения морфологического характера в грабаровском пласте среднеармянского, в частности в семантике, залоге, а также в системе спряжения и склонения; на текстологических выкладках показывается, что вследствие особенностей развития языка многие слова начинают употребляться в таких значениях и морфологических категориях, которые были неизвестны грабару. А проявляющиеся в системе склонения и спряжения выявляют те основные тенденции, которые в дальнейших этапах развития языка часто превращаются в общую закономерность.